ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (0283) 2-33-30 ֆաքս (0283) 2-33-30
էլ. հասցե http://www.sisian.am/
էլ. փոստ sisiancity@sisian.am, sisisn.syuniq@mta.gov.am

Թիվ 1467
22 մայիսի 2024թ.

«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Հ. ՀՈՎՆԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հ. Հովնիկյան

Սիսիանի համայնքի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հազարաշեն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2024 թվականի մարտի 27-ին կնքվել է Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում գտնվող անասնախմոցի ջրամատակարարման վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման N «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-24/7» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև 2024 թվականի մայիսի 22-ի ՀՀ ՊՎԾ-ի կողմից Սիսիան համայնքին ուղղված գրությունը.

«Անգեղակոթ բնակավայրի արոտավայրում գտնվող անասնախմոցի ջրամատակարարման վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-24/7»** ծածկագրով գնման ընթացակարգի վերլուծության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ «Հազարաշեն» ՍՊ ընկերության 74.36% (բաժնեմասի չափը ՀՀ դրամով՝ 477500) բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Գուրգեն Բենյամինի Հակոբյանը:

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Մառք» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01236957) 2023 թվականի հունվարի 10-ից մինչև 2025 թվականի հունվարի 10-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: **«Հազարաշեն» ՍՊ ընկերության և «Մառք» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 74.36% (բաժնեմասի չափը ՀՀ դրամով՝ 477 500) բաժնեմասի սեփականատեր**

Գուրգեն Բենյամինի Հակոբյանը հանդիսացել է նաև «Մառք» ՍՊ ընկերության տնօրեն:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ***ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված***, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Կարգի 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**

Հիմք ընդունելով վերոնշյալը հանգամանքը Սիսիան համայնքի և «Հազարաշեն» ՍՊԸ-ի միջև կնքված N «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-24/7» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Ա. Հակոբջանյան

Կատ. Կ. Իվանյան
+37428323330